5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար կողմերը կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2. Պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե ապացուցեն, որ պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը տեղի է ունեցել ոչ իր մեղքով կամ անհաղթահարելի ուժի /ֆորս-մաժոր/ ազդեցությամբ:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

6.2. Սույն պայմանագիրը գործում է մինչև սույն պայմանագրով նախատեսված պայման-ների կատարման ավարտը:

7. Այլ դրույթներ

7.1. Կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի պայմանները կարող են փոփոխվել լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

7.2. Սույն պայմանագրի կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերի լուծումը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Այն դեպքում, երբ «Գնումների մասին ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը «Կատարող»-ը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ « Կատարող»-ին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերը ի հայտ գալուց հետո «Պատվիրատուն» իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, «Պատվիրատուն» չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով «Կատարող»-ի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ «Կատարող»-ը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել «Պատվիրատու»-ի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ «Պատվիրատու»-ի ստացածով:

7.4. Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր ուժ:

7.5. Սույն պայմանագրի պայմանների խախտման դեպքում կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը: Սույն պայմանագրի միակողմանի լուծման պատճառով առաջացած վնասները փոխհատուցվում են ըստ գործող ՀՀ օրենսդրության:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ Իջևանի մասնաճյուղ	«Ռոբերտ Մարկոսյան և ընկերներ» ՍՊԸ
Հասցե՝ Տավուշի մարզ, ք. Իջևան Ռիսանողական 3	Տավուշի մարզ ք. Իջևան Արցախյան 11
«Արդշինբանկ»-ի «Իջևանի մասնաճյուղ»	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247610017094	Հ/Հ 1930026875340100
ՀՎՀՀ 07601553	ՀՎՀՀ 07613964
Տնօրեն՝ Մ. Առաքելյան	Էլ. Հասցեն markosyan.r@mail.ru
	Հեռ. 0263-4-04-24, 093-000-161
------------------ (ստորագրություն) ԿՏ	------------------ (ստորագրություն)